



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 24.

1846

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Դաստիարակութեան սկզբունքներ :

ԱՅ անգամ դաստիարակաց ջանքը անոր համար կը փճանայ որ իրենց աշակերտին խելքին ու ջանքին վրայ վստահութիւն չեն ցուցնէր : Տղու մը որ շատ անգամ անփայտ, անխել, ապուշ ըսես, խելացի ալ էր նէ՝ ապուշ կ'ըլլայ . տղու մը որ շատ անգամ չարահայտ, անգութ, ծայր, անհոգ ըսես, բարեսիրտ ալ էր նէ՝ չար կ'ըլլայ :

Ի՞նչ զարմանալի բան է . ինչպէս որ նաւու մը մէջ երկու նաւապետ իրարու հակառակ հրամաններ որ տան, նաւը առաջ չերթար և կամ կ'ընկղմի, ասանկ ալ տղու մը կրթութեանը մէջ երկու դաստիարակ երբոր իրարու հակառակ ճամբաներ բռնեն, ան տղուն կրթութենէն յոյս չկայ : Ի՞նչ աղէկ է որ դաստիարակութեան կերպը աղէկ ալ չըլլայ նէ՝ մէկ տեսակ ըլլայ, քան թէ լաւ ըլլայ ըսելով՝ երկու իրեք ներհական դաստիարակներու ձեռք ըլլայ :

Ի՞նչ զե՞ս որ տղան վրադ համար.

մունք ունենայ իր օգտին համար . երբոր բան մը կ'ընես՝ բոլոր պատճառները մի զրուցեր իրեն, բայց բոլոր պատճառներն ալ մի ծածկեր իրմէն :

Դաստիարակը պիտի գիտնայ որ միշտ պզտիկը զմեծը կը դատէ . աս գիտնալով՝ հարկաւ աւելի զգուշութիւն պիտի պահանջէ ինքը իրմէ քան թէ իր աշակերտէն :

Տղոց աչքը խիստ սուր է ուրիշի պակասութիւնը դիտելու . բայց զարմանալին ու աղէկը աս է որ ուրիշի աղէկութեանը կը հետեւին նաեւ առանց դիտելու :

Սաստիկ պէտք է զգուշանալ ու զգուշացնել տղաքն որ իրար դատել ու զրպարտել չսորվին . ամենայն քաղցրութեամբ աս գարշելի ախտը խլելու է անոնց սրտէն . ապա թէ ոչ, չեղած չարիքը եղածի տեղ կը դնեն ու դնել կուտան, և մեծամեծ փրսսներու պատճառ կ'ըլլան :